ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
22	Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Տարազաբաճկոն՝ ուսադիրներով (տղամարդու), արդարադատության մայորից մինչև գնդապետի կոչում ունեցող դատական կարգադրիչների համար (Ձև 6): Կարվող ուսադիրներով, որը պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), բնական մետաքսե աստառով (8-C5-ԲՇ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), կտորի և աստառի միջև որակյալ ներդիրով (խոլոստով), իսկ օձիքը և թևածալքերն ունեն մուգ կարմիր եզրաշերտ՝ 2,5 մմ լայնությամբ (2581 արտիկուլի մահուդե կտորից): Թևածալքերի վրա առկա են երեք կոճակներ: Տարազաբաճկոնը երկփեղկանի և երեք կոճականի է, թիկնամասի ներքևում առանց կտրվածքի, իսկ օձիքի վրա ամրացվում է դատական կարգադրիչների ծառայության խորհրդանշանը: Տարազաբաճկոնը կոճկվում է աջ կողմից: Ձախ թևքին առկա է թևքանշան (Ձև 20), իսկ աջ թևքին ՀՀ դրոշ՝ նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան: Նախքան տարազաբաճկոնների պատրաստումը տարազաբաճկոնների գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Տարազաբաճկոնների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև տարազաբաճկոնների կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների

	փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, պարկերի վրա պետք է նշված լինեն անվանումները ըստ վերցված անհատական չափսերի, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
22	